# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. օգոստոսի 30-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Ս. Խաչատրյանը և Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

## Օրակարգ

1.2022-2023թթ. ուս. տարվա ուսումնական գործընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ:
2.Ընթացիկ հարցեր:

**1. Լսեցին –** Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը 2022-2023թթ. ուս. տարվա ուսումնական գործընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հարցի վերաբերյալ:

Ռ. Սադոյանը նախ շնորհավորեց պրոֆեսորադասախոսական անձնակազմին և բարեմաղթանքներ հղեց նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ցավով նշեց, որ ամբիոնը այս տարի ունեցավ կրճատումներ և հույս հայտնեց, որ առաջիկայում, առաջին իսկ հնարավորության դեպքում կփորձեն վերականգնել, վերադարձնել կրճատված դասախոսներին:

Տիկին Սադոյանը նշեց նաև, որ դասաբաշխումները դեռ նախնական են, և կարող են փոխվել մագիստրոսների և հեռակայի ընդունելություններից հետո: Բայց մինչ դա, ըստ այս դասաբաշխման, պետք Classroom հարթակում տեղադրել առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, այդեղ կան շատ բացեր և թերի կողմեր, որոնք պետք է շտկել, վերանայել նոր չափանիշներին համապատասխան 6 ամսվա ընթացքում, քանի որ բուհը 2024թ.-ին պետք է հավատարմագրվի:

Նա նշեց, որ առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների փոփոխման հիմքերն ու նյութերը բուհն ուղարկել է բոլոր դասախոսների աշխատանքային էլ. հասցեներին: Որակի հետ կապված բոլոր հարցերով դասախոսները կարող են դիմել ամբիոնի և ֆակուլտետի որակի պատասխանատուներին, ինչպես նաև այդ հարցերը համակարգող, ռեկտորի օգնական՝ Հ. Թադևոսյանին:

**Արտահայտվեցին-**Ամբիոնի որակի պատասխանատու՝ Ա. Մինասյանը, ով նշեց, որ 6 ամիս ժամանակ է տրված մասնագիտության ՄԿԾ-ները /մասնագիտական կրթական ծրագրերը/ վերնայելու, որը պետք է բխի ՈԱՇ-ից /Որակի ազգային շրջանակից/, իսկ վերափոխված ՄԿԾների հիման վրա պետք է վերանայվեն առարկայական նկարագրերը: Այս շղթայում պետք է ուշադրություն դարձնել վերջնարդյունքներին, որոնք որոշիչ դեր են կատարում այս գործընթացում:

Իհարկե ՄԿԾ-ները կազմվել են դեռևս 2018թ-ից, բայց այդ ժամանակ հիմքեր չեն տրվել, պահանջները տրվում էր հիմնականում բանավոր կերպով, իսկ այժմ մենք ունենք ձեռքի

տակ բավականին նյութեր, հիմքեր, որոնք կտեղադրվի մեր ամբիոնի էլ. հարթակում, որից կարող եք օգտվել նաև Դուք։

ՄԿԾ-ները կազմելուց հետո, որտեղ պետք է պարտադիր պահպանված լինեն և՛ ակադեմիական և՛ մանկավարժական ասպեկտները, անհրաժեշտ կլինի մշակելու նաև գնատաման համակարգը, իհարկե հաշվի առնելով մեր մասնագիտության սպեցեֆիկությունը։

Արտահայտվեցին ամբիոնի մյուս դասախոսները՝ Մ. Մուրադյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը և այլոք, ովքեր նշեցին, որ բավականին ժամանակ կա այդ ամենը վերանայելու և պատշաճ ձևով ներկայացնելու։

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Վերանայման համար անհրաժեշտ բոլոր նյութերը էլ. հարթակում հասանելի դարձնել ամբիոնի բոլոր անդամների համար, կատարել նշումներ, նկատառումներ, որոնք կքննարկվեն առաջիկա ամբիոնի նիստին։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. սեպտեմբերի 14-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Ս. Խաչատրյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

## Օրակարգ

1.«ԶԼՄ-ների ինֆորմացիայի դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ» խորագրով /հեղ. Ռ. Վարդանյան/ թեկնածուական ատենախոսության քննարկման և որպես առաջատար կազմակերպություն կարծիք ներկայացնելու վերաբերյալ հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

**1.Լսեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը «ԶԼՄ-ների ինֆորմացիայի դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ» խորագրով /հեղ. Ռ. Վարդանյան/ / թեկնածուական ատենախոսության քննարկման և որպես առաջատար կազմակերպություն կարծիք ներկայացնելու հարցի վերաբերյալ:

Ռ. Սադոյանը նշեց, որ ամբիոնը ընտրվել է որպես առաջատար կազմակերպությունը, որը պետք է կարծիք ներկայացնի վերոնշյալ ատենախոսության վերաբերյալ:

Քանի որ հեղինակը որոշ հանգամանքներով պայմանավորված չի ներկայացել, հետևաբար այդ գործը վստահվել է մեր ամբիոնի դասախոս՝ Ս. Կրոյանին, ով հակիրճ կներկայացնի աշխատանքի բովանդակությունը: Եթե հարցեր կլինեն, կարող եք դիմել փորձագիտական հանձնաժողովի անդամ՝ Գ. Կարապետյանին:

Արտահայտվեցին՝ Ս. Կրոյանը, ով ներկայացրեց ատենախոսության արդիականությունը, նպատակը, խնդիրները, պաշտպանվող դրույթները, որոնք նաև հոդվածների տեսքով տպագրվել են տարբեր գիտական հանդեսներում: Ներկայացվեց նաև գիտական նորույթը, գիտագործնական նշանակությունը, վերլուծվեց աշխատանքի 4 գլուխները, իսկ վերջում կատարեց եզրակացություններ և առաջարկություններ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Վ. Հովհաննիսյանը և Մ. Մուրադյանը, ովքեր հարց հնչեցրեցին ՀՀ նոր սիմվոլների, բրենդների ստեղծման վերաբերյալ, որոնց պատասխանեց Գ. Կարապետյանը:

Արտահայտվեցին դասախոսներ՝ Ս. Դայանը և Ա. Մինաասյանը, ովքեր նկատառում կատարեցին աշխատանքի խնդիրների քանակապես շատ լինելու, գիտական նորույթը ավելի կոնկրետացնելու, և աշխատանքում առկա նկարները՝ հավելված տեղափոխելու վերաբերյալ:

Արտահայտվեց Գ. Կարապետյանը, ով հավաստիացրեց, որ բոլոր նկատառումներն ու դիտողությունները հաշվի կառնվեն, կշտկվեն:

Արտահայտվեց՝ Ռ. սադոյանը, ով առաջարկեց, բոլոր դեպքերում դրական կարծիք տալ, քանի որ մեծ աշխատանք է կատարված և հույս հայտնեց, որ հնչեցված բոլոր նկատառումները հաշվի կառնվեն և ժամանակին կշտկվեն:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Որպես առաջատար կազմակերպություն «ԶԼՄ-ների ինֆորմացիայի դերը ՀՀ զբոսաշրջային գրավչության ձևավորման մեջ» խորագրով /հեղ. Ռ. Վարդանյան/ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ տալ դրական կարծիք։

2. Ընթացիկ հարցեր։

Քննարկվեց 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի հարցաշարերի, միջանկյալ գրավոր և ամփոփիչ քննությունների տոմսերի քննարկման և հաստատման հարցը։

Արտահայտվեցին ամբիոնի բոլոր դասախոսները, ովքեր նշեցին, որ արդեն կազմվել և ամբիոն են ներկայացվել այս կիսամյակի բոլոր քննական տոմսերը։

Որոշեցին հաստատել այս ուս. տարվա 1-ին կիսամյակի քննական բոլոր տոմսերը։

Նիստի վերջում ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանի կողմից արվեց հայտարարություն այն մասին, որ բուհը ստացել է նամակ քարտեզագիր, քարտեզագետ՝ Գագիկ Ղազարյանից, այն մասին, որ իր կողմից ստեղծված բազմաթիվ քարտեզներ օգտագործվել են 2019թ. Ա. Խաչատրյանի և մեր ամբիոնի նախկին աշխատակից՝ Տ. Բաբայանի կողմից հեղինակած գրքերից մեկում։ Այդ գրքի տպագրությունից հետո անցկացվել է գրաքննություն և պարզվել է, որ տեղի է ունեցել գրագողություն։ Այժմ այդ հարցով զբաղվում են իրավապահ մարմինները։

Ռ. Սադոյանը կոչ արեց զերծ մնալ նման իրավիճակներից, և չշահարկել ամբիոնի և բուհի բարձր պատիվը։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հոկտեմբերի 6-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Կրոյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Ս. Խաչատրյանը, Մ. Մուրադյանը և Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

## Օրակարգ

1. Առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրսի ատենախոսական թեմաների և բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը 2022-2023թթ. ուս. տարվա առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրսի ատենախոսական թեմաների և բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ:

Ռ. Սադոյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները գիտական ղեկավարների կողմից նախօրոք տրվել են ամբիոն, թեմաները նայել են ամբիոնի մյուս դասախոսները, կատարել նկատառումներ, որոնք այժմ կքննարկենք, կվերանայենք:

Պետք է նշել, որ 2022-2023 ուս տարում աշխարհագրություն մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրս ընդունվել են 8 ուսանող, իսկ լանդշաֆտային պլանավորում մասնագիտության՝ 1 ուսանող, առկա բակալավրիատում՝ 12 ուսանող, իսկ հեռակայում՝ 7 ուսանող:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Մ. Մաթոսյանը, Ա. Մինասյանը, Ա. Աջամօղլյանը և այլոք, ովքեր ներկայացրեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

Արտահայտվեցին ամբիոնի մյուս անդամները, ովքեր առաջարկեցին ևս մեկ անգամ վերանայել՝ հաշվի առնելով բոլոր նկատառումները, որից հետո նորից կքննարկվեն:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Եվս մեկ անգամ վերանայել ներկայացված մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաները և առաջիկայում հրավիրել ամբիոնի նիստ:

**2. Ընթացիկ հարցեր:**

Քննարկվեց Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի կողմից հեղինակած՝ «ՌԱԶՄԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ» խորագրով, ուսուցչի համար նախատեսված, ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին ամբիոնի վարիչ պ/կ՝ Ռ. Սադոյանը, ով նշեց որ ուղեցույցը նախօրոք տրվել է ամբիոն՝ ծանոթանալու և այսօր քննարկում կազմակերպելու նպատակով:

Կխնդրեմ ամբիոնի բոլոր անդամները իրենց անաչառ կարծիքն արտահայտեն ուղեցույցի վերաբերյալ:

**Արտահայտվեցին** ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Մ. Մաթոսյանը, Ս. Դայանը և այլոք, ովքեր ներկայացրեցին բոլոր այն բաց թողումները, որոնք առկա են ուղեցույցում, և դրանց ուղղումն՝ որպես ուղեցույց, շատ կարևոր համարելով, խնդրեցին տասն օր տալ ժամանակ տալ հեղինակներին այդ բոլոր թերությունները շտկելուն և հաջորդ ամբիոնի նիստին քննարկման ներկայացնելուն:

Որոշեցին-Ելնելով ամբիոնի անդամների խնդրանքից, ուղեցույցը քննարկման ներկայացնել շտկումներն կատարելուց հետո:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

*Նիստը կայացել է առցանց*

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հոկտեմբերի 12-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Ս. Կրոյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Մ. Մուրադյանը, Ս. Խաչատրյանը, Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

**Օրակարգ**

1. Առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրսի ատենախոսական թեմաների և բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

1.**Լսեցին –** Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը 2022-2023թթ. ուս. տարվա առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրսի ատենախոսական թեմաների և բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ:

Ռ. Սադոյանը նշեց, որ նախորդ ամբիոնի նիստում, թեմաների հետ կապված բոլոր դիտարկումները, նկատառումները և բացերը լրացվել են և հիմա ներկայացվելու են վերջնական տարբերակով:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ա. Աջամօղլյանը, Վ. Հովհաննիսյանը և այլոք, ովքեր դրական կարծիք հայտնեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաստատել առկա ուսուցման մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների և բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաները:

**2. Ընթացիկ հարցեր:**

Քննարկվեց «Աշխարհագրություն-բնագիտություն» մասնագիտության ուսումնական պլան կազմելու համար՝ հանձնաժողովի ստեղծման հարցը:

Արտահայտվեց ամբիոնի որակի պատասխանատու՝ Ա. Մինասյանը, ով ներկայացնելով աշխատանքի պատասխանատու և ծավալուն լինելը, խնդրեց ստեղծել հանձնախումբ, մասնագիտական տարբեր բլոկներից, ովքեր ևս մասնակցություն և աջակցություն կունենան ուսումնական նոր պլանի ստեղծման գործում:

Արտահայտվեց ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը, ով կողմ էր այդ մտքին և հենց այդ պահին որոշվեց ամբիոնի հինգ անդամների /Մ. Մաթոսյան, Ա. Աջամօղլյան, Ս. Կրոյան, Մ. Մուրադյան, Ն. Սամվելյան/ ընդգրկել այդ գործընթացում:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի**
**ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**
**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

*ԿՔՍ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հոկտեմբերի 19-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Մ. Մաթոսյանը, Ս. Խաչատրյանը, Վ. Հովհաննիսյանը /առցանց/: Հարգելի պատճառով բացակայում էին Մ. Մուրադյանը, Ն. Սամվելյանը, Ա. Աջամօղլյանը և Ս. Կրոյանը : Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

## Օրակարգ

1. Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի կողմից հեղինակած՝ «Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» ուղեցույցի քննարկում և հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

**1. Լսեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի կողմից հեղինակած՝ «Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ռ. Սադոյանը նշեց, որ Ա. Մինասյանը ուղեցույցի վերաբերյալ ունի երեք կարծիքներ՝ Հ. Սայադյանի, Գ. Հակոբյանի և Ս. Կրոյանի կողմից գրված:

Այնուհետև խոսք տրվեց Ա. Մինասյանին ուղեցույցի բովանդակությունը մանրամասն ներկայացնելու, որից հետո քննարկում կատարելու համար:

Ուղեցույցի հեղինակ՝ Ա. Մինասյանը ներկայացրեց աշխատանքի կառուցվածքը, ներածությունը, հետազոտության օբյեկտը, առարկան, մշակված ռազմաաշխարհագրական խաղերի սցենարը, որը փորձարկվել է ուսանողների կողմից: Վերջում ներկայացվեց եզրակացությունները:

Ուցեցույցը ներկայացնելուց հետո Ռ. Սադոյանը հարց հնչեցրեց առաջարկությունների բացակայության հետ կապված, որին հեղինակը պատասխանելով, նշեց, որ ունեն մշակված ծրագիր, որտեղ ներառված են բոլոր առաջարկությունները:

Արտահայտվեց ամբիոնի դասախոս՝ Գ. Կարապետյանը- ով հարցեր հնչեցրեց թե՛ ռազմաաշխարհագրության հիմունքները ո՞վ է մշակել և ինչու՞ համահեղինակը ներկա չէ, և թե՛ այդ աշխատանքը ի՞նչ կապ ունի ԱԴՄ ամբիոնի հետ:

Հարցերին պատասխանեց Ա. Մինասյանը-նշելով, որ իրենք չեն մտել ռազմագիտության դաշտ, ընդամենը խոսում են այն մասին, ինչը հիմա փորձարկվում և մյուս տարվանից կներդրվի ռազմական պատրաստության ճամբարների շրջանակներում: Մենք առաջարկում ենք կրթության, ծրագրի մեր տարբերակը՝ այդ ճամբարներում կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպելու նպատակով:

Արտահայտվեց՝ ամբիոնի դասախոս՝ Մ. Մաթոսյանը- ով նշեց, որ մանրամասն ծանոթացել է աշխատանքին, ողջունում է գաղափարը՝ հիմք ընդունելով արդի մարտահրավերները, իսկապես մեծ պատասխանատվություն է:

Կատարել եմ առանցքային և ընդհանրական դիտարկումներ, ընդհանրականը հիմա ձեռքիս տակ չունեմ, գտնում եմ, որ իրականում մեծ, ծավալուն աշխատանք է արված, ողջունելի է նաև, որ մոտիվացված աշխատել է նաև մեր ուսանողը:

Քանի որ աշխատանքում նախագծային սկզբունքը կա, այնտեղ նախագծի մեկ օրինակով տրվել էր և արդյունավետությունը գնահատել, որը իսկապես կիրառելի է բոլոր նախագծային աշխատանքներում, իհարկե արդյունավետության գնահատման տարբեր մեթոդաբանություն, հաշվարկներ կան, որոնց մենք հետևողական չենք եղել, իսկ այդ ծրագրերում ներառվել է, ինչը շատ դրական է և ուսանելի:

Այսինքն, մեթոդական առումով, չնայած նրան, որ ռազմաաշխարհագրական խաղի մեկ նմուշ է, ցանակալի էր, որ ավելի շատ լինեին, մեծ աշխատանք է կատարվել, բայց մասնագիտական տեսանկյունից կան սկզբունքային հարցեր, որոնց ուզում եմ անդրադառնալ: Օրինակ, կառուցվածքի հետ կապված աշխատանքը պետք է դրված լիներ նախագծային շրջանառության մեջ, ընդգրկելով այն շահեկիցներին, ովքեր հետաքրքրված նման հարցերով. պատական կառույցներից սկսված, վերջացած՝ աշակերտներով: Ցանկալի է նաև ընդգրկել մասնագետի, քանի որ կան ռազմագիտական տերմիններ, որոնք աշխարհագետի համար անհասկանալի են:

Այսպիսով, իմ առաջարկն է մասնագիտական տեսանկյունից լրամշակել և համապատասխան ոլորտներում դնել փորձաքննության, իսկ տեսական հատվածին անդրադառնալով, կխնդրեմ ուշադրություն դարձնել հղումներին, որոնք շատ դեպքերում բացակայում են:

**Արտահայտվեց՝ Ս.** Դայանը – ով նշեց, որ մանրամասն նայել է աշխատանքը, կան շատ տառասխալներ, գլուխ առ գլուխ առանձնացրել և գրի է առել բոլոր բացթողումներն ու դիտողությունները, որոնք հերթով ներկայացրեց.

. կան ոչ գիտակա և չհիմնավորված ձևակերպումներ,

.արված են ոչ գրագետ թարգմանություններ,

. անընդհատ խոսվում է 2-րդ համաշխարհային պատերազմի մասին, այնինչ վերջին ժամանակներում տեղի են ունեցել նոր պատերազմներ, որոնք կարելի է օրինակ բերել,

. կան ռազմագիտական տերմիններ, որոնց նմանություններն ու տարբերությունները անհասկանալի են,

. կան աշխարհագրական տերմիններ, որոնք շատ ընդհանուր են տրված և անհասկանալի,

.մտքից միտք անցումները նույնպես անահասկանալի են և կապ չկա դրանց մեջ,

.Էջերը լցված է հղումներով, սեփական վերլուծություն չկա,

. ավիացիոն օրինակներ են բերված աղուսյակների տեսքով, որոնք ինչպես պետք է իրականացնի ուսուցիչը, դպրո-ավիացիա կապը չեմ տեսնում, մի գուցե օդերևութաբանական դիտարկումներ կատարելու համար են դրանք, կրկին անհասկանալի է,

.կան մշակված ռազմաաշխարհագրական խաղեր, որոնց կարևորությունն ու կրթադաստիարակչական նշանակությունը անհասկանալի է,

. համահեղինակ Մանե Հարությունյանին ճանաչելով որպես մեր ուսանող, կարծում եմ դեռ այդքան հասու չէ ռազմական աշխարհագրության հարցերը արծարծելու,
Այսպիսով, Ս. Դայանը առաջարկեց ուղեցույցը դնել ձորձաքննության։
Արտահայտվեց՝ ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը- ով առաջարկեց ուղեցույցում ավելացնել նաև բացատրական բառարան, որը կուղղորդի ոչ մասնագետին հասկանալու ռազմագիտական տերմինները։
Արտահայտվեցին՝ ամբիոնի դասախոս՝ Ս. Խաչատրյանը- ով կարևորեց աշխատանքը հատկապես աշակերտների ռազմաաշխարհագրական կրթության և դաստիարակության գործում։ Ուղեցույցը նայելիս ընդամենը առաջարկել է ներառել մաթեմատիկաաշխարհագրական խնդիրները, ինչը հեղինակը հաշվի է առել։
Ընդհանուր առմամբ լավ աշխատանք է և մեր նման պատերազմող երկրի համար շատ կարևոր։
Քննարկման վերջում հեղինակ՝ Ա. Մինասյանը ներկայացրեց ուղեցույցի վերաբերյալ տրվա երեք դրական կարծիքները, տրված՝ Հ. Սայադյանի, Ս. Կրոյանի և Գ. Հակոբյանի կողմից։
Այսպիսով, քվեարկության արդյունքում ստացվեց 2 կողմ, 2 դեմ և 3 ձեռնպահ։
**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հեղինակներին տալ ժամանակ «Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» ուղեցույցի լրամշակման և նորից քննարկման ներկայացնելու։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի**
**ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**
**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. հոկտեմբերի 25-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Ա. Աջամօղլյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Խաչատրյանը: Հարգելի պատճառով բացակայում էր՝ Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

### Օրակարգ

1. Առկա բակալավրիատի ուսումնական պլանում բնագիտական բաղադրիչի ներդրման, վերանայման և հաստատման հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

**1. Լսեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը առկա բակալավրիատի ուսումնական պլանի վերանայման և հաստատման հարցի վերաբերյալ:

Տիկին Սադոյանը նշեց, որ ուսումնական պլանի փոփոխության հիմքը պետք է լինեն չափորոշիչները, դպրոցական ծրագրերը, առարկայական տրամաբանությունն ու հաջորդականությունը:

Այնուհետև խոսքը տրվեց ամբիոնի որակի պատասխանատու՝ Ա. Մինասյանին, ով սահիկահանդեսի միջոցով ներկայացրեց նախ առկա բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագիրը, դրանում կատարված փոփոխությունները, որոնք ելնում են ՈԱՇ-ի պահանջներից:

Ներկայացվեց, որ ըստ այս նոր ՄԿԾ-ի այս բաժինն ավարտողը ստանում է մանկավարժության բակալավր, աշխարհագրության-բնագիտության ուսուցիչ, բայց առաջարկում եմ ավելացնել նաև բնության ուսուցիչ, որպեսզի օրենքով ամրագրվի և դպրոցում «Բնություն» առարկան պարապեն մեր աշխարհագետ-բնագետները, քանի որ բնությունը բնագիտության նույն ծրագիրն է՝ ավելի փոքր ծավալով, ցածր մակարդակով, այս պարագայում կռվախնձոր չի լինի ուսուցիչների միջև:

Այս հարցում միջամտեց Ռ. Սադոյանը, ով առաջարկեց հանել բնությունը, քանի որ նախարարության մասնագիտությունների ցանկում նման մասնագիտություն չկա, բայց հանելուց էլ, խնդրեց ուշադրություն դարձնել ՄԿԾ-ի բովանդակությանը, որպեսզի չփոխվի:

Մ. Մաթոսյանը ևս առաջարկեց հանել բնություն մասը, քանի որ չնայած ողջունում է այդ քայլը, բայց բնության ուսուցիչ կատեգորիա չի ընդունվելու , քանի որ աշխարհագրության և բնագիտության մեջ արդեն ամփոփված է բնությունը:

Ա. Մինասյանը- ով բոլորի ուշադրությունը հրավիրեց այն հարցին, որ ՄԿԾ-ում առկա է եղել 3 կրեդիտանոց ուսումնական պրակտիկա՝ կիսաստացիոնար, բայց ամբիոնը չի անցկացրել, քանի որ ուսումնական պլանում չի եղել արտացոլված: Նա նշեց, որ այս հարցին պետք է ուշադրություն դարձնել:

Ռ. Սադոյանը առաջարկեց կիսաստացիոնարի դիմաց դնել գծիկ և ավելացնել ստացիոնար, որպեսզի եթե ստացիոնար էլ չտան, գոնե կիսաստացիոնար թույլ տան անցկացնելու:

Այնուհետև Ա. Մինասյանը ներկայացրեց, որ թարմացվել են ծրագրի նպատակները, որոնք վերանայելիս ուշադրություն է դարձվել բուհի ռազմավարության նպատակներին, քանի որ այն ելնում է մանկավարժության, հոգեբանության և մեթոդիկայի գաղափարներից, հետևապես միայն աշխարհագրություն-բնագիտություն կատեգորիաներ ներառել ճիշտ չէր:

Ա. Մինասյանը ներկայացրեց նաև ծրագրի ներմուծման հիմնավորումը:

Այս հարցի հետ կապված որոշ առաջարկներ, նկատառումներ կատարեց ձևակերպումների մեջ, որոնք տեղում ուղղվեցին։
Ա. Մինասյանը շարունակելով խոսքը, նշեց, որ հիմնավորումը պետք է բխեր բուհի ռազմավարության խնդիրներից, որոնք արտացոլել է ՄԿԾ-ում։ Կատարեց նաև աշխատաշուկայի վերլուծություն, փաստեց, որ կա մասնագետի պահանջարկ, բայց թվեր դժցվարացավ նշել։
Այստեղ Մ. Մաթոսյանը առաջարկեց կարիերայի կենտրոնից վերցնել բոլոր տվյալները և ներառել ՄԿԾ-ում։
Քննարկումներ եղավ վերջնարդյունքների հետ կապված, որի ժամանակ Մ. Մաթոսյանը առաջարկեց ավելի ցայտուն դարձնել բնագիտության բլոկի վերջնարդյունքները՝ համագործակցելով բնագետների հետ։
Ա. Մինասյանը այդ առաջարկին ի պատասխան նշեց, որ բնագիտության բաժինը 2016թ.-ից այլևս չի գործել և ՄԿԾ էլ չկա, դրա համար վերջնարդյունքների հետ կապված օգտվել է բնագիտության դպրոցական ծրագրերից։
Ա. Մինասյանը ներկայացրեց, որ առկա բակալավրիատին տրված է ընդհանուր 240 կրեդիտ, որից 139-ը՝ մասնագիտական առարկաներին հետևյալ համամասնությամբ.
37 կրեդիտ-բնագիտական բլոկ,
46 կրեդիտ- ֆիզիկական աշխարհագրության բլոկ, այդ թվում նաև Գեոինֆորմատիկա առարկան /4 կրեդիտ/,
42 կրեդիտ- սոցիալտնտեսական աշխարհագրության բլոկ,
10 կրեդիտ Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա առարկային
Ի սկզբանե ֆիզիկաաշխարհագրական բլոկը եղել է 75 կրեդիտ, որը նվազել է մինչև 42 կրեդիտ, իսկ սոցիալ-տնտեսաաշխարհագրական բլոկը 47-ից դարձել է 42: Կրեդիտների նման նվազումը կատարվել է հիմք ընդունելով դպրոցական ծրագիրը, որում ֆիզիկաաշխարհագրական և սոցիալ-տնտեսաաշխարհագրական բլոկները զուգահեռ գնում են։ Նույն սկզբունքվ ձևավորել ենք բնագիտական լիարժեք բլոկ։
Ա. Մինասյանը նշեց նաև, որ ուսումնական պլանում 6 առարկա դուրս է եկել կամ խտացվել է այլ առարկայի մեջ, օրինակ՝ սկզբում Երկրաբանություն և Գեոմորֆոլոգիա առարկաներին տրվել է 5,6 կրեդիտներ, այնուհետև կրեդիտները չբավարարելու հետևանքով դրանք միացվեցին իրար, կամ դուրս է եկել Լանդշաֆտագիտութուն առարկան, Ջրաօդերևութաբանությունն ու կլիմայագիտությունը, տնտեսական բլոկից՝ Քաղաքակրթությունների աշխարհագրությունը, Հասարակական արտադրության հիմունքները, Աշխարհագրական ռեգիոնալագիտությունը, վերջինս խտացվել է Սոցիալ-տնտեսական երկրագրություն առարկայում։ Բայց դրանց փոխարեն ներառվել 11 բնագիտական բլոկի առարկա։
Արտահայտվեց Մ. Մաթոսյանը, ով դեմ էր Աշխարհագրական ռեգիոնալագիտություն առարկայի կրճատմանը, քանի որ կարևոր թեմաներ դուրս են մնալու ծրագրից, ինչը անթույլատրելի համարեց։ Առաջարկեց տնտեսական բլոկի որևէ առարկայից կրեդիտ տալ, որպեսզի այդ առարկան վերականգնվի։ Բացի դա անհամամասնություն համարեց այն, որ Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա առարկային տրվում է 10 կրեդիտ, իսկ Բնագիտության դասավանդման մեթոդիկա առարկային ընդամենը 4 կրեդիտ։
Արտահայտվեց Մ. Մուրադյանը- ով նշեց, որ Տարածաշրջանների և պետությունների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն առարկայի կրեդիտները զգալիորեն կրճատվել են, իսկ Քաղաքակրթությունների աշխարհագրություն առարկան ընդհանրապես դուրս է մնացել։ Առաջարկեց կրճատված կրեդիտները վերականգնել, իսկ կրճատված առարկան եթե ոչ բակալավրիատում, ապա գոնե մագիստրատուրայում վերականգնել։ Իսկ Աշխարհագրության և բնագիտության դասվանդման մեթոդիկաներն էլ միավորել։

Վերջին առաջարկին ի պատասխան Ա. Մինասյանը մտահոգություն հայտնեց բնագիտության մեթոդական մասը պարապելու առումով, իսկ Քաղաքակրթությունների աշխարհագրություն առարկան դուրս է մնացել, քանի որ դպրոցական ծրագրում նման առարկա չկա, հնարավորության դեպքում, կտեղափոխվի մագիստրատուրա՝ որպես ընտրովի դասընթաց։
**Արտահայտվեց** Գ. Կարապետյանը, ով դեմ էր Երկրաբանություն և Գեոմորֆոլոգիա առարկաների միացմանը, հիմնավորելով, որ դրանք տարբեր և առանձին գիտություններ են, դեմ էր նաև Բնօգտագործում և բնապահպանություն և Գեոէկոլոգիա առարկաների միացմանը։
Ի պատասխան Գ. Կարապետյանի հիմնավորումների, Ա. Մինասյանը պատասխանեց, որ առարկաների միավորումը արվել է Ն. Սամվելյանի կողմից՝ առցանց քննարկումների ժամանակ։
Գ. Կարապետյանն էլ նշեց, որ չի միացել առցանց քննարկմանը, քանի որ կա աշխատանքային ժամ, իսկ քննարկումները դրվում են երեկոյան ժամերին, ինչը աշխատակիցներին հարմար չէ։
Արտահայտվեց Ս. Դայանը- ով նշեց, որ «Հայաստանի և հարակից երկրների պատմական աշխարհագրություն» առարկան վերանվանվել է «Հայկական լեռնաշխարհ և հարակից երկրների պատմական աշխարհագրություն», ինչը ճիշտ չէ, քանի որ Հայկական լեռնաշխարհը ֆիզիկաաշխարհագրական հասկացություն է։
Ա. Մինասյան – Քանի որ դպրոցում անցնում են Հայկական լեռնաշխարհ բաժին, այդ իսկ պատճառով դասընթացը պետք է արտացոլված լինի նաև ուսումնական պլանում։
**ՈՐՈՇԵՑԻՆ-** Աշխարհագրություն- Բնագիտություն նոր մասնագիտության ՄԿԾ-ն և ուսումնական պլանը, վերոնշյալ փոփոխություններով, ներկայացնել համապատասխան բաժին և հետևել ընթացքին։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**
**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թ. դեկտեմբերի 26-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Խաչատրյանը: Հարգելի պատճառով բացակայում էին՝ Ա. Աջամօղլյանը, Ա. Մինասյանը, Ս. Կրոյան, Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

## Օրակարգ

1. Լանդշաֆտային պլանավորում մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:
2. Ընթացիկ հարցեր:

**1.Լսեցին** – Լանդշաֆտային պլանավորում մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը-ով նշեց, որ սա 1-ին նախապաշտպանությունն է, յուրաքանչյուր ուսանողի տրվելու է 10ր. ժամանակ, որի ընթացքում պետք է հակիրճ ներկայացնել աշխատանքի բովանդակությունը, առաջարկություններն ու եզրակացությունները:

Արտահայտվեցին մագիստրոս՝ Օլյա Ավագյանը- ով ներկայացրեց մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդաբանական հիմքը և մեթոդները, հետազոտության գիտական նորույթը, գործնական նշանակությունը:

Վերլուծեց աշխատանքի 3 գլուխները, ներկայացրեց եզրակացություններն ու առաջարկությունները:

Արտահայտվեցին դասախոսներ՝ Ս. Դայանը, Մ. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, ովքեր հարցեր տվեցին թեմայի շրջանակներում և կատարեցին մի քանի նկատառումներ:

Արտահայտվեցին՝ Ոսկեհատ Սարիբեկյանը, ով ևս մանրամասն ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը, վերլուծեց գլուխներն ու ենթագլուխները, վերջում կատարեց առաջարկություններ և եզրակացություններ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ս. Խաչատրյանը, Մ. Մուրադյանը, Մ. Մաթոսյանը, ամբիոնի վարիչի պ/կ ՝ Ռ. Սադոյանը, ովքեր հարցեր հնչեցրեցին կատարված աշխատանքերի հետ կապված և կատարեցին մի քանի նկատառումներ, որոնք մինչ հաջորդ նախապաշտպանությունը պետք է շտկվեն:

Արտահայտվեցին՝ Մերի Մկրտչյանը ով ներկայացրեց թեզի նպատակը, խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, վերլուծեց աշխատանքի 3 գլուխները, կատարեց եզրահանգումներ և առաջարկություններ:

Արտահայտվեցին ամբիոնի վարիչի պ/կ ՝Ռ. սադոյանը, ամբիոնի դասախոս՝ Ս. Խաչատրյանը, Գ. Կարապետյանը, ովքեր հարցեր հնչեցրեցին կատարված

հետազոտության սկզբունքների, մեթոդների վերաբերյալ և կատարեցին մի քանի նկատառումներ։

***ՈՐՈՇԵՑԻՆ՝*** Մագիստրոսներին տալ հնարավորություն հնչեցված բոլոր նկատառումներն ու բացթողումները շտկելու մինչ հաջորդ նախապաշտպանությունը։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. հունվարի 18-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մաթոսյանը, Մ. Մուրադյանը, Ա. Մինասյանը, Ս. Խաչատրյանը: Հարգելի պատճառով բացակայում էին՝ Ա. Աջամօղլյանը, Ս. Կրոյան, Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

### Օրակարգ

1.Լանդշաֆտային պլանավորում մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն՝ 2-րդ փուլ:
2.Ընթացիկ հարցեր:

**1.Լսեցին** – Լանդշաֆտային պլանավորում մասնագիտության հեռակա 3-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը-ով նշեց, որ սա նախապաշտպանության 2-րդ՝ վերջնական փուլն է, յուրաքանչյուր ուսանողի տրվելու է 10ր. ժամանակ, որի ընթացքում պետք է հակիրճ ներկայացնել աշխատանքի բովանդակությունը, առաջարկություններն ու եզրակացությունները:

Արտահայտվեցին՝ Ոսկեհատ Սարիբեկյանը, ով մանրամասն ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը, վերլուծեց գլուխներն ու ենթագլուխները, կատարեց աշխատանքի SWOT վերլուծություն, վերջում կատարեց առաջարկություններ և եզրակացություններ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Վ. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Մինասյանը, ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը, ովքեր հարցեր հնչեցրեցին ատենախոսության հետ կապված:

Արտահայտվեցին մագիստրոս՝ Օլյա Ավագյանը- ով ներկայացրեց մագիստրոսական թեզի թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդաբանական հիմքը և մեթոդները, հետազոտության գիտական նորույթը, գործնական նշանակությունը:

Վերլուծեց աշխատանքի 3 գլուխները, կատարեց աշխատանքի SWOT վերլուծություն, ներկայացրեց եզրակացություններն ու առաջարկությունները:

Արտահայտվեցին դասախոսներ՝ Ս. Խաչատրյանը, Ա. Մինասյանը, Մ. Մուրադյանը, ովքեր հարցեր տվեցին թեմայի շրջանակներում և կատարեցին մի քանի նկատառումներ քարտեզների, 2-րդ գլխի վերաբերյալ, որոնք մինչ պաշտպանությունը պետք է շտկվեն:

Արտահայտվեցին՝ Մերի Մկրտչյանը ով ներկայացրեց թեզի նպատակը, խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, վերլուծեց աշխատանքի 3 գլուխները, կատարեց եզրահանգումներ և առաջարկություններ:

Արտահայտվեցին ամբիոնի վարիչի պ/կ `Ռ. սադոյանը, ամբիոնի դասախոս՝ Ս. Խաչատրյանը, Ս. Դայանը, ովքեր հարցեր հնչեցրեցին հուզազգացմունքային աստիճանի, դրա բացահայտման վերաբերյալ, և խնդրեցին տալ հիմնավորումներ դրա աստիճանը որոշելու դեպքում:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Երաշխավորել պաշտպանության և մինչև հունվարի 23-ը ամբիոն հանձնել պատրաստի մագիստրոսական աշխատանքները՝ կարծիքներով և գրախոսություններով:

Ընթացիկ հարցեր:

Քննարկվեց 2022թ. ամբիոնի հաշվետվությունը վերանայելու հարցը:

Արտահայտվեցին՝ ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը, ով նշեց, որ բավականին աշխատանքեր կան անելու ամբիոնի հաշվետվության հետ կապված, պետք մանրամասն գրել թե ուսումնամեթոդական, գիտահետազոտական, մարքեթինգային, որակի, միջազգային կապերի հետ կապված ամբիոնը ինչ աշխատանքեր է կատարել:

Հավելեց նաև, որ հաշվետվությունը հասանելի կդարձվի ամբիոնի դասախոսների համար և մեկ շաբաթվա ընթացքում բոլոր պետք է իրենց կատարած աշխատանքերի վերաբերյալ լրացումներ կատարեն հաշվետվության մեջ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Ա. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Դայանը և այլոք, ովքեր դրական կարծիք հայտնեցին հաշվետվությունը վերանայելու կապակցությամբ:

Որոշեցին մեկ շաբաթվա ընթացքում ամբողջապես վերանայել 2022թ.-ի ամբիոնի հաշվետվությունը:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Գ. Բարսեղյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. մարտի 30-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մաթոսյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Ա.Աջամօղլյանը և Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը:

**Օրակարգ**

1.Անտոնյան Շուշաննայի հայցորդության գիտական ղեկավարի և թեմայի ընտրության:

2.Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցի քննարկում:

3.«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի հեռակա 5-րդ և առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների պատրաստման ընթացքի քննարկում / գիտ. ղեկավարներ/:

4.«Աշխարհագրություն» և «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությունների առկա ուսուցման 2-րդ կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների պատրաստման ընթացքի քննարկում / գիտ. ղեկավարներ/:

5.Հեռակա և առկա ուսուցման մանկավարժական պրակտիկայի ընթացքի քննարկում / մանկ. պրակտիկայի ղեկավարներ/:

6.Ընթացիկ հարցեր:

**1.Լսեցին**-Անտոնյան Շուշաննայի հայցորդության թեմայի և գիտական ղեկավարի հարցը:

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը, ով նշեց, որ այս նիստով պետք է որոշվի Անտոնյան Շուշաննայի հայցորդության թեմայի և գիտական ղեկավարի հարցը: Խոսքը տրվեց Անտոնյան Շուշաննային:

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Ամբիոնը հարցը չդրեց քննարկման , քանի որ Անտոնյան Շուշաննան արտահայտվեց, որ փոխել է իր որոշումը և ցանկանում է հայցորդության դիմել Մանկավարժության ամբիոն:

**2.Լսեցին**- Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցի քննարկում:

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը ով նշեց, որ հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցը չի կարող կայանալ, քանի որ հայցորդները և ասպիրանտը չեն ներկայացել նախապես ներկայացված ամբիոնի նիստին տարբեր

պատճառներով և եթե հաջորդ նիստին ևս չներկայան, այդ դեպքում տվյալ հայցորդները չեն ատեստավորվի ամբիոնի կողմից։ Արտահայտվեցին՝ Ս.Խաչատրյանը, Ս.Դայանը, Գ.Կարապետյանը։

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Հետաձգել հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցը։ Հաջորդ նիստից բացակայելու դեպքում տվյալ հայցորդները և ասպիրանտը չեն ատեստավորվի ամբիոնի կողմից։

**3. և 4.Լսեցին**-Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների պատրաստման ընթացքի քննարկում ,զեկուցեցին գիտական ղեկավարները։

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սաղոյանը հարց ուղեց գիտական ղեկավարներին, թե որքանով են պատրաստ ուսանողները ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությանը, աշխատանքի որքան մասն է կատարված, ինչ խնդիրներ են ի հայտ եկել աշխատանքի կատարման ընթացքում։
Ա.Մինասյան- ինձ մոտ ավարտական աշխատանք գրում են 3 ուսանող առկա բակալավրիատից, 2 ուսանող հեռակա բակալավրիատից, 2 ուսանող առկա մագիստրատուրայից։ Առկա բակալավրիատում աշխատանքները 90 տոկոսով պատրաստ են, մնացել են որոշակի շտկումներ։ Հեռակա բակալավրիատում ևս կապը պահում եմ ուսանողների հետ , աշխատանքները կատարվում են, մնացել են որոշակի շտկումներ։ Մագիստրատուրայում աշխատանքները գրեթե ավարտել ենք, նախապաշտպանություններին աշխատանքները պատրաստ կլինեն։
Ս.Խաչատրյան- ինձ մոտ ավարտական աշխատանք գրում է մեկ ուսանող, ում աշխատանքը 90 տոկոսով կատարված է։ Մագիստրոսական թեզ 2 ուսանող, մեկ ուսանողի աշխատանքն ամբողջությամբ կատարված է, մյուսի մոտ կան քարտեզագրական որոշակի խնդիրներ, որոնք պետք է կարգավորվեն, մինչև նախապաշտպանության օրը կարծում եմ կհասցնենք։
Վ.Հովհաննիսյան -ինձ մոտ ավարտական աշխատանք գրում են առկա համակարգից 2 ուսանող, տվյալ ուսանողներին հանձնարարել եմ աշխատել 3-րդ գլխի վրա։ Հեռակա համակարգում 3 ուսանող, այս ուսանողներից առաջինի աշխատանքը կարելի է ասել պատրաստ է, երկրորդինը դեռ վատ վիճակում է ,հանձնարարել եմ աշխատել 3 գլուխների վրա, երրորդ ուսանողի մոտ պատրաստ է միայն առաջին գլուխը, աշխատում ենք, որ հասցնենք ամբողջ աշխատանքը պատրաստել։
Ս.Կրոյան-ինձ մոտ կցված է մեկ ուսանող, Լանդշաֆտային պլանավորում մագիստրատուրա 2-րդ կուրսից, տվյալ ուսանողի աշխատանքը պատրաստ է 90 տոկոսով, մնացել են որոշակի շտկումներ։
Գ.Կարապետյան-ինձ մոտ ավարտական աշխատանք գրում է մեկ ուսանող, առկա բակալավրիատ 4-րդ կուրսից Հարությունյան Աշոտը։ Աշխատանքը մեկ ամիս առաջ դեռ պատրաստ չէր, թեմաները ներկայացրել եմ, աշխատանքը հանձնարարել , բայց ուսանողը դեռ աշխատանքը չի ներկայացրել։

Մ.Մաթոսյան-ինձ մոտ ավարտական աշխատանք գրում են երեք ուսանող, երկուսը առկա համակարգում, մյուսը հեռակա։ Մագիստրոսական թեզ գրում է մեկ ուսանող Լանդշաֆտային պլանավորում մագիստրատուրա 2-րդ կուրսից։ Ավարտական աշխատանքները առկայում մեկ ուսանող ամբողջական կազմել է, մյուս ուսանողը աշխատում է երրորդ գլխի վրա։ Հեռակայում ավարտական աշխատանք գրող ուսանողը դեռ աշխատում է երկրորդ գլխի վրա։ Մագիստրոսական թեզի վրա Գրիգորը Գրիգորյանը աշխատում է, այս պահին աշխատում ենք կայքի ստեղծման վրա,կարծում ենք մինչև նախապաշտպանություն կհասցնենք։
Ս.Դայան-ինձ մոտ ավարտական աշխատանքներ չկան, մեկ ուսանող գրում է մագիստրոսական թեզ, աշխատանքը ավարտուն փուլում է, մնացել են որոշակի տեխնիկական հարցեր։
Մ.Մուրադյան- ինձ մոտ ավարտական աշխատանք գրում են 3 ուսանող, երկուսը առկա համակարգից, մեկը հեռակա։ Մագիստրոսական թեզ գրում է մեկ ուսանող։ Առկայում երկու աշխատանքների առաջին և երկրորդ գլուխները պատրաստ են, աշխատում ենք երրորդ գլխի վրա, ինչպես նաև պետք է կատարվեն եզրակացություններ և առաջարկություններ։ Մագիստրատուրայի ուսանողը դեռ աշխատանքը չի ներկայացրել։
Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը նշեց , որ աշխատանքների կատարման ընթացքը պետք է արագացնել, նախապաշտպանություններին ներկայանալ սահիկների միջոցով, յուրաքանչյուր ուսանողի ներկայացումը 7-10 րոպե։

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Արագացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի աշխատանքների գործընթացը, աշխատել թերությունների շտկման վրա։ Նախապաշտպանություններին աշխատանքները ներկայացնել թղթային տարբերակով և սահիկների միջոցով։ Աշխատանքների մեջ ներառել հղումներ, գրականության ցանկի մեջ ներառելով նաև նոր գրականություն։

**5.Լսեցին**-Հեռակա և առկա ուսուցման մանկավարժական պրակտիկայի ընթացքի քննարկման հարցը։

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը հարցը ուղեց պրակտիկայի ղեկավարներին, ինչպես են ընթանում պրակտիկաները, արդյոք արդյունավետ է ընթացքը, ինչ խնդիրների եք բախվել պրակտիկայի ընթացքում։
Արտայահրտվեցին պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Մաթոսյանը, Վ.Հովհաննիսյանը և Ա.Մինասյանը։ Պրակտիկաները հիմնականում ընթացել են բնականոն հունով և խնդիրներ չեն առաջացել։ Ա.Մինասյանը նշեց, որ իր պրակտիկայի խմբում մեկ խնդիր է եղել, Մկրտչյան Արթուրի երկրից դուրս գնալու և պրակտիկային չմասնակցելու հետևանքով փոխվել է կատարողականը, քանի որ բուհը չի պարտավորվում վճարել տվյալ ուսանողի համար։ Մնացած աշխատանքները կատարվում են, թղթապանակները վերահսկվում են ղեկավարների կողմից։

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Շարունակել պրակտիկայի ընթացքը, վերահսկելով ուսանողների ներկայությունը պրակտիկաներին։

**6. Ընթացիկ հարցեր։**

**ԼՍԵՑԻՆ** - ««Աշխարհագրություն-բնագիտություն»» նոր մասնագիտության մասնագրերի, թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի պատրաստման հարցի մասին։

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյանը, ով նշեց, որ ««Աշխարհագրություն-բնագիտություն»» մասնագիտությունը հաստատվել է նախարարության կողմից և պետք է աշխատել ամբիոնի աշխատակազմով, լրացնել ըստ բլոկների թեմատիկ տրոհումները, առարկայական նկարագրերը և մասնագրերը։
Ա.Մինասյան-Առաջարկում եմ նայել աշխատանքը միասին և աշխատել ՄԿԾ-ներով։ Խնդիր է առաջանում, որ առարկաները գալիս են այլ ամբիոններից և այդ ամբիոնների կողմից տրամադրված ՄԿԾ-ները մեզ չեն բավարարում։ Առաջարկում եմ հանդիպում այդ ամբիոնների հետ, որպեսզի փոխանակենք մեր ամբիոնների կողմից կազմված ՄԿԾ-ները և աշխատենք միասին։

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Աշխատել մասնագրերի, թեմատիկ տրոհումների և նկարագրերի վրա ըստ մասնագիտական բլոկների։ Կազմակերպել հանդիպում մյուս ամբիոնների հետ, ներկայացնել մեր ամբիոնի կողմից մշակված ՄԿԾ-ները, տեսնել նաև իրենցը, քննարկել և բերել վերջնական տեսքի։

7.ԼՍԵՑԻՆ- Հեռակա Լանդշաֆտային պլանավորում մագիստրատուրա 1-ին կուրսից առկա Աշխարհագրություն մագիստրատուրա 1-ին կուրս տեղափոխված ուսանողների հարցը :

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան-ունենք երկու ուսանող , ովքեր հեռակա Լանդշաֆտային պլանավորում բաժնից տեղափոխվել են առկա Աշխարհագրություն մագիստրատուրա 1-ին կուրս, տվյալ ուսանողների համար պետք է ընտրվեն գիտական ղեկավարներ և մագիստրոսական թեզի թեմաներ։

ՈՐՈՇԵՑԻՆ-Տեղափոխված երկու ուսանողների գիտական ղեկավարներ նշանակել Ս.Դայանին և Ս.Խաչատրյանին։

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Լ. Սարուխանյան**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10**

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. ապրիլի 12-ի նիստի:*

*Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝Մ.Մինասյանը, Ս.Դայանը, Ս.Կրոյանը, Մ.Մաթոսյանը, Մ.Մուրադյանը, Ս.Խաչատրյանը, Ա.Աջամօղլյանը, Գ.Կարապետյանը, Վ.Հովհաննիսյանը: Հարգելի պատճառով բացակա էր՝Ն.Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝Ռ. Սադոյանը:*

**Օրակարգ**

**12.04.23 ժամը 14:00**

1.2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլի աշխատանքների ներկայացում,
2.Ընթացիկ հարցեր:

**Լսեցին** – 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլի աշխատանքների ներկայացման հարցը:

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանը- Հարգելի ուսանողներ այսօր ձեր ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլն է, որի ժամանակ պետք է ներկայացնեք՝ որ փուլում են գտնվում ձեր ավարտական աշխատանքները, դրանց քանի տոկոսն է կատարված և ինչ թերություններ կամ խնդիրներ են առկա: Յուրաքանչյուրիդ սահիկահանդեսով ներկայանալու համար տրվում է 7-10 րոպե ժամանակ:

Այնուհետև թվով ութ ուսանողները ներկայացրին իրենց աշխատանքները, որից հետո արտահայտվեցին դասախոսները, նշեցին առկա թերությունները, կատարեցին դիտարկումներ խնդիրների լուծման նպատակով հանդես եկան առաջարկություններով:

**Ռ. Սադոյան-** Զգուշացնում եմ, եթե հաջորդ նախապաշտպանությանը ներկայանաք նման կիսատ աշխատանքներով և շտկումներ չանեք, ապա չեք երաշխավորվի պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Թվով ութ ուսանողներից երեքին երաշխավորել պաշտպանության, իսկ մյուս հինգ ուսանողներին հնարավորություն տալ ներկայանալ երկրորդ փուլով՝ արված դիտարկումները ընդունելով ի գիտություն, և մինչ 2-րդ նախապաշտպանությունը ավարտին հասցնել բոլոր աշխատանքները:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի**
**Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**
**Ամբիոնի մասնագետ՝ Լ.Սարուխանյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. ապրիլի 26-ի նիստի:*

Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝Գ. Կարապետյանը, Ա. Մինասյանը, Ս. Դայանը, Վ. Հովհաննիսյանը, Մ. Մուրադյանը, Ս. Կրոյանը, Ս. Խաչատրյանը, Մ. Մաթոսյանը: Հարգելի պատճառով բացակայում էին Ա.Աջամօղլյանը և Ն. Սամվելյանը: Նիստը ղեկավարում էր ստորաբաժանման ղեկավար՝ Ռ. Սադոյանը

### Օրակարգ

1. 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլի աշխատանքների ներկայացում,
2. 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի Լանդշաֆտային պլանավորման և Աշխարհագրության մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության առաջին փուլի ներկայացում,
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին – 2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլի աշխատանքների ներկայացման հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյան - Հարգելի ուսանողներ այսօր ձեր նախապաշտպանության 2-րդ փուլն է, կարծում եմ հասցրել եք շտկել այն բոլոր վրիպակներն ու տեխնիկական սխալները, որոնք առկա էին նախորդ նախապաշտպանությանը: Այժմ, սահիկահանդեսների միջոցով, հակիրճ՝ 7-10 րոպեի ընթացքում ներկայացրեք ձեր կատարած աշխատանքները:

Հաջորդիվ արտահայտվեցին ուսանողները , որոնցից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ավարտական աշխատանքի նպատակը, արդիականությունը, խնդիրները, հետազոտությամն մեթոդները, վերլուծեց աշխատանքի գլուխները, կատարած եզրակացություններ և առաջարկություններ:

Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝Ս. Խաչատրյանը Ռ. Սադոյանը Գ. Կարապետյանը , Ա. Մինասյանը, Մ. Մաթոսյանը և այլք, ովքեր յուրաքանչյուր ուսանողի տալիս էին թեմային վերաբերող տարբեր հարցեր, կատարում դիտարկումներ և հանդես գալիս առաջարկություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Բոլոր ուսանողների ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության, պայմանով, որ առկա թերությունները պետք է շտկեն մինչև նշանակված օրը:

Լսեցին –2022-2023 ուսումնական տարվա առկա համակարգի Լանդշաֆտային պլանավորման և Աշխարհագրության մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության առաջին փուլի ներկայացման հարցը:

Արտահայտվեցին – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանը- Հարգելի ուսանողներ այսօր ձեր մագիստրոսական թեզերի նախապաշտպանության առաջին փուլն է, որի ժամանակ պետք է ներկայացնեք ՝ որ փուլում են գտնվում ձերմագիստրոսական թոզերը, դրանց քանի տոկոսն է կատարված և ինչ թերություններ կամ խնդիրներ են առկա: Յուրաքանչյուրիդ սահիկահանդեսով ներկայանալու համար տրվում է 7-10 րոպե ժամանակ:

Այնուհետև թվով հինգ ուսանողները ներկայացրին իրենց մագիստրոսական թեզերը, որից հետո արտահայտվեցին դասախոսներ՝ Ռ. Սադոյանը, Ս. Խաչատրյանը, Ս. Դայանը և այլք: Նշեցին առկա թերությունները, կատարեցին դիտարկումներ, խնդիրների լուծման նպատակով հանդես եկան առաջարկություններով:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Թվով հինգ ուսանողներչց չորսին երաշխավորել պաշտպանության, իսկ մեկ ուսանողին թույլատրել իրականացրած շտկումներով ներկայանալ երկրորդ փուլին:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի**
**Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**
**Ամբիոնի մասնագետ՝ Լ.Սարուխանյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. մայիսի 4-ի նիստի:*

*Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Գ. Կարապետյանը, Մ. Մինասյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը, Ն. Սամվելյանը, Մ. Մաթոսյանը, Ա. Աջամօղլյանը:*

*Բացակա էին՝ Ս. Կրոյանը, Ս. Դայանը, և Մ.Մուրադյանը: Նիստը ղեկավարում էր ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝Ռ.Սադոյանը:*

### Օրակարգ

1.«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

**1.Լսեցին** – «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության հարցը:

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի ժ/պ Ռ.Սադոյանը - Հարգելի ուսանողներ, ամբիոնի կողմից նախօրոք տեղեկացվել էիք, որ ավարտական աշխատանքները պետք է ներկայացնել սահիկահանդեսների ուղեկցությամբ, յուրաքանչյուր ուսանողի տրվելու է 7-10 րոպե ժամանակ:
Հաջորդիվ ելույթ ունեցան ուսանողները: Նրանք ներկայացնում էին ավարտական աշխատանքների նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդները, վերլուծում աշխատանքի գլուխները, վերջում կատարում եզրահանգումներ և առաջարկություններ:
Պատրաստ վիճակում էին երկու ավարտական աշխատանք, մյուս հինգ աշխատանքների մեջ առկա էին տեխնիկական և բովանդակային որոշ բացթողումներ:
**ՈՐՈՇԵՑԻՆ-** Երաշխավորել պաշտպանության 7 ավարտական աշխատանքներից 2-ը, իսկ 5-ը ներկայացնել երկրորդ նախապաշտպանությանը՝ լրամշակելու վերապահումով:
Ընդունել ի գիտություն, և մինչ 2-րդ նախապաշտպանությունը ավարտին հասցնել բոլոր աշխատանքները:

**2. Լսեցին** – Մանկավարժական պրակտիկայի շրջանակներում, 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում կազմակերպվող ուսումնաճանաչողական պրակտիկայի 1-ին շրջափուլի 1-ին մասը փոխարինել «գործնական աշխատանքներ տեղանքում» ուսումնամեթոդական բնույթի պրակտիկայով հարցը:
**Արտահայտվեցին-** Ամբիոնի վարիչի ժ/պ Ռ.Սադոյանը - Հարգելի գործընկերներ, ամբիոնի նիստի օրակարգում այս հարցը դրվել է դասախոսների խնդրանքով, քանի որ ամբիոնի դասախոսների կողմից կազմվել է հիմնավորում՝ մանկավարժական պրակտիկայի շրջանակներում ուսումնական և հետազոտական աշխատանքները

դաշտային պայմաններում կազմակերպելու անհրաժեշտության մասին: Խնդրում եմ, ծանոթանալ հիմնավորմանը և ներկայացնել ձեր կարծիքները:
**Մ.Մաթոսյան**-Համարում եմ, որ խիստ անհրաժեշտ է պրակտիկայի անցկացումը,ես կողմ եմ:
**Ս.Խաչատրյան**-Երբ ուսանողը տեսնում է որևէ օբյեկտ, ավելի ճիշտ պատկերացում է կազմում տվյալ օբյեկտի մասին: Միանշանակ կողմ եմ պրակտիկայի անցկացմանը:
**Վ.Հովհաննիսյան**-Ֆիզիկաաշխարհագրական համալիրների ուսումնասիրության համար անհրաժեշտ է դրանց անմիջական ուսումնասիրումը հենց տեղում: Ապագա ուսուցիչը ձեռք է բերում կարողունակություններ դաշտում աշխատելու համար:
**Ն.Սամվելյան**-Համարում եմ որոշումը հիմնավոր և խիստ անհրաժեշտ:
**Ա.Մինասյան**-Դաշտային դիտարկումները և հետազոտություններն անհրաժեշտ են ապագա ուսուցչին, դասարանում նյութը հավուր պատշաճի ներկայացնելու համար:
**Ա.Աջամօղլյան**-Միանշանակ կողմ եմ պրակտիկայի անցկացմանը, շատ կարևորելով մասնագիտական գիտելիքների ամրապնդման համար դաշտային պրակտիկաները:
Կատարվեց քվեարկություն, ամբիոնի քվեարկության արդյունքում 8 կողմ ձայնով պրակտիկայի անցկացումը հաստատվեց ամբիոնի կողմից:

**ՈՐՈՇԵՑԻՆ**-Ուսումնասիրել առաջարկվող հարցը և կարծիքներ հայտնել հաջորդ նիստում՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝ Լ. Սարուխանյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13

*ԿՔԱ ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023թ. Հուլիսի 6-ի նիստի:*

*Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի դասախոսներ՝ Ս.Կրոյանը, Ն.Սամվելյանը, Ա.Աջամօղլյանը, Գ.Կարապետյանը, Մ.Մուրադյանը, Ա.Մինասյանը, Վ.Հովհաննիսյանը,Ս.Դայանը: Հարգելի պատճառներով բացակա էին՝ Մ.Մաթոսյանը և Ս.Խաչատրյանը:*

**Օրակարգ**
**06.07.23 ժամը 14:00**

1.2022-2023 ուսումնական տարվա ամփոփում,
2.Մանկավարժական պրակտիկայի շրջանակներում ուսումնական և հետազոտական աշխատանքներ դաշտային պայմաններում կազմակերպելու հարցի քննարկում և հաստատում:
3.2023-2024 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմման վերաբերյալ քննարկում,
4.Ընթացիկ հարցեր:

**Լսեցին 1**.–2022-2023 ուսումնական տարվա ամփոփման հարցը:
**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանը- Հարգելի գործընկերներ ավարտվեցին ֆակուլտետի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Պաշտպանություններն ընթացան հարթ, առանց խնդիրների:
Արտահայտվեցին դասախոսները, որոնք իրենց կարծիքը հայտնեցին պաշտպանությունների վերաբերյալ և հանդես եկան առաջարկություններով, նոր ուսումնական տարում առավել շտկված աշխատանքներ ներկայացնելու վերաբերյալ:
**Որոշեցին**-2022-2023 ուս տարին համարել փակված և ներկայացնել առաջարկություններ նոր ուսումնական տարվա համար:
**Լսեցին** – 2. Մանկավարժական պրակտիկայի շրջանակներում, 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում կազմակերպվող ուսումնաճանաչողական պրակտիկայի 1-ին շրջափուլի 1-ին մասը փոխարինել «գործնական աշխատանքներ տեղանքում» ուսումնամեթոդական բնույթի պրակտիկայով, որը կոչված է լրացնելու նոր ՀՊՉ-ով նախատեսված գործնական աշխատանքների կազմակերպման կարողության ձևավորումը ապագա ուսուցիչների մոտ հարցի քննարկում և հաստատում:
**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանը-Ամբիոնի որոշ դասախոսների կողմից առաջարկվել է առկա բակալավր 2-րդ կուրսում վերականգնել դաշտային ուսումնաճանաչողական պրակտիկան: Ինչ կարծիքներ և առաջարկություններ ունեք տվյալ հարցի շուրջ:
Արտահայտվեցին ամբիոնի դասախոսներ՝ Վ.Հովհաննիսյանը, Ա.Աջամօղլյանը, Ս.Կրոյանը և այլք, ովքեր դրական արտահայտվեցին հարցի վերաբերյալ: Առաջարկեցին անկավարժական պրակտիկայի շրջանակներում, 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում կազմակերպվող ուսումնաճանաչողական պրակտիկայի 1-ին շրջափուլի 1-ին մասը

փոխարինել ,,գործնական աշխատանքներ տեղանքում,, ուսումնամեթոդական բնույթի պրակտիկայով, որը կոչված է լրացնելու նոր ՀՊՉ-ով նախատեսված գործնական աշխատանքների կազմակերպման կարողության ձևավորումը ապագա ուսուցիչների մոտ:

**Որոշեցին-** Որոշեցին հարցը հաստատել և առաջարկը ներկայացնել ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

**Լսեցին-**3. 3. 2023-2024 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության և դասաբաշխման կազմման վերաբերյալ քննարկումը,

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանը- 2023-2024 ուսումնական տարվա համար, ամբիոնում կրճատվել է մոտավորապես 2000 ժամ: Սա բացատրեց նրանով, որ դիմորդներ չկան, առաջին կուրսեր, թե՛ բակալավրիատում և թե՛ մագիստրատուրայում չեն կազմվել տվյալ պահին, տրված ամբողջ ժամերը թողնվել է թափուր,բացի դա այս տարի չունենք բակալավր առկա 2-րդ կուրս և Լանդշաֆտային պլանավորման մագիստրատուրա 2-րդ կուրս:

Դասախոսները արտահայրտվեցին, ներկայացրեցին իրենց կարծիքները և առաջարկությունները տվյալ հարցի վերաբերյալ:

**Որոշեցին-** Նիստին հնչեցված բոլոր խնդիրների ու առաջարկությունների շուրջ խորապես մտածել և աշխատել դիմորդների ընդունելության բարձրացման վրա:

Ընթացիկ հարցեր՝

**4.Լսեցին-**Ա.Մինասյանի և Մ.Հարությունյանի կողմից հեղինակած ՝«Ռազմական աշխարհագրության գիտելիքների արժեորումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» ձեռնարկի քննարկման և հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի կողմից հեղինակած՝ «Ռազմական աշխարհագրության գիտելիքների արժեորումը դպրոցական աշխարհագրության դասընթացում» ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Նշվեց, որ նախորդ քննարկումից հետո հեղինակները հաշվի են առել բոլոր դիտարկումները, կատարել շտկումները և կատարել լրամշակում:

**Որոշվեց-** 5 կողմ, 2 դեմ, 1 ձեռնպահ ձայների քվերակության արդյունքում ուղեցույցը երաշխավորվեց տպագրության:

**5.Լսեցին-** classroom հարթակի դասընթացների մշտադիտարկման հարցի մասին:

**Արտահայտվեցին** – Ա.Մինասյանը նշելով classroom հարթակի դասընթացների հերթական մշտադիտարկման մասին, նշելով, որ պետք է լրամշակել բոլոր դասընթացների թեմատիկ տրոհումներն ու թարմեցնել ,,ուսումնառության առաջադրանքներ,, բաժինը:

**Որոշվեց-** Ընդունել ի գիտություն:

**Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պ/կ՝** **Ռ. Սադոյան**

**Ամբիոնի մասնագետ՝** **Լ.Սարուխանյան**

**06.07.2023թ.**